զէն-օղլին չեկաւ մեզ հետ, նա մնաց կղզու ափերի մօտ՝ տեսնելու, թէ ի՞նչ եղաւ իր նաւակը: Ասլանը նրան ոչինչ չասաց, գոնէ իբրեւ բժիշկ չարգելեց նրան, որ այնպէս թրջուած հագուստով կարող էր հիւանդանալ, մանաւանդ որ մրրիկը դեռ չէր դադարել, եւ սաստիկ ցուրտ քամի էր փչում: Եւ եթէ մի բան ասելու լինէր, նա հազիւ թէ կը լսէր բժշկի խորհուրդը: Նրա սիրելին, նրա նաւակը չկար:

Ոչ մի անգամ կրակը ինձ այնքան ախորժելի չէր երեւացել, որպէս այնօր, չնայելով որ քամին բուխարու երդիկից փչում էր, եւ փոքրիկ խուցը լցուած էր ծխով: Ես ամբողջ մարմնով դողում էի, բայց կրակի ջերմութիւնը ինձ նորից կեանք տուեց:

Երբ ես բաւական զգաստացած էի զգում ինձ, իմ առաջին հոգսը եղաւ տեսնել, արդեօք Ծովիկի տուած կոտրած սանդրը իեն մո՞տ էր, թէ մնացել էր ծովի մէջ: Որքա՜ն մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ ձեռքս տարայ ծոցս, տեսայ սանդրը իր տեղումն էր: Այդ ժամանակ Ասլանն էլ ձեռքը տարաւ իր ծոցը, բայց դուրս հանեց մի այլ բան: Դա նորին սրբազնութեան առաջնորդի յանձնարարական թուղթն էր, որի գրութիւնը թրջուելով, համարեա թէ եղծուել էր: Նա տուեց այդ թուղթը աբեղաներից մէկին, որ մնացել էր մեզ մօտ սպասաւորելու, եւ ասաց.

— Խնդրեմ այդ թուղթը ցոյց տուեցէք ձեր վանահօրը, դա նորին սրբազնութեան առաջնորդի ինձ տուած թուղթն է, թէեւ դժուարութեամբ է կարդացւում, բայց դարձեալ կարելի է որոշել, թէ ի՜նչ նպատակով ես եկել եմ ձեր վանքը:

Աբեղան, նորին սրբազնութեան անունը լսելով, մի առանձին պատկառանքով առեց թուղթը, նայեց նրա վրայ, երեւի աշխատեց մի բան կարդալ, այս կողմ ու այն կողմ շուռ տուեց եւ, մի երեւելի գիւտ արածի նման, վերջապէս ասաց.

— Այդ սրբազանի կնիքն է:

Աբեղան հեռանալուց յետոյ, ես ու Ասլանը մնացինք խուցի մէջ միայնակ:

— Պէտք է մի տաք բան խմել, — ասաց Ասլանը, — գոնէ մի փոքր գինի լինէր:

— Միթէ՞ այստեղ գինի չի լինի, — հարցրի ես:

— Հազիւ թէ:

Ասլանի ասածը ուղիղ դուրս եկաւ: Երբ աբեղան վերադարձաւ եւ յայտնեց վանահօր կողմից կատարեալ պատրաստականութիւն՝ կատարելու մեր